ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 096-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄՅԱՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով հաստատված կարգի 54-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N2-17 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքը (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 17

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին:

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Լոռու մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. ՀՀ Լոռու մարզպետին և Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «02» «օգոստոսի» 2024թ.